# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԲՈՒԽԱՐԵՍՏ (ՌՈՒՄԻՆԻԱ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**1. Գործուղված անձի անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոն.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյան

**2. Գործուղման վայրը և ժամկետները.**

2025 թվականի հոկտեմբերի 13-14, Ռումինիա, Բուխարեստ

**3. Հրավիրող կողմ.**

Համաժողովը կազմակերպվել էր Ռումինիայի աշխատանքի, ընտանիքի, երիտասարդության և սոցիալական համերաշխության նախարարության, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի՝ երեխաների նկատմամբ բռնության հարցերով հատուկ ներկայացուցչի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համատեղ:

**4. Գործուղման նպատակը.**

Մասնակցություն երեխաների նկատմամբ բռնության դադարեցման տարածաշրջանային նախարարական համաժողովին՝ նպատակ ունենալով ամրապնդել Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում երեխաների նկատմամբ բռնության վերացմանն ուղղված քաղաքականությունը և խթանել համապարփակ, ոլորտների միջև համագործակցված գործողությունների առաջխաղացումը:

**5. Քննարկված թեմաները.**

Համաժողովի ընթացքում քննարկվել են հետևյալ հիմնական թեմաները՝

- երեխաների նկատմամբ բռնության ներկա իրավիճակի վերլուծություն և անգործության հետևանքների գնահատում՝ հիմնված գլոբալ և տարածաշրջանային վիճակագրական տվյալների վրա;
- երեխաների նկատմամբ բռնության վերացման ուղղությամբ ընդունված և ապացուցված արդյունավետ լուծումներ ու հանձնառություններ;
- երեխաների առցանց պաշտպանության ապահովման բարդ խնդիրների հաղթահարման համալիր մոտեցումներ;
- անվտանգ և հոգատար միջավայրի ձևավորում դպրոցներում և ընտանիքներում;

- խնամքի և սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի կատարելագործում խոցելի խմբերում գտնվող երեխաների համար;
- երեխայի պաշտպանության ինտեգրված համակարգերի բարեփոխում՝ օրենսդրության, քաղաքականության, տվյալների և կառավարման հաշվետվողականության շրջանակներում;
- ինտեգրված ծառայությունների ապահովում բռնության ենթարկված և բռնությանն ականատես դարձած երեխաների համար:

Համաժողովի շրջանակներում մասնակից պետությունները ներկայացրել են երեխաների նկատմամբ բռնության վերացմանն ուղղված ազգային հանձնառությունները: Անդրադարձ է կատարվել նաև 2024 թվականին Բոգոտայում կայացած համաժողովից հետո իրականացված գործողություններին՝ ներկայացնելով ձեռքբերումներն ու առաջընթացը՝ միտված երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերի վերացմանը:

Քննարկվել են ռազմավարական առաջնահերթություններ՝ հիմնված կրթական համակարգերում բռնության կանխարգելման մոդելների ընդլայնման, խնամքի ծառայությունների տրամադրման և արդարադատության ոլորտի՝ երեխաներին ուղղված մատչելի և զգայուն մոտեցումներով բարեփոխումների վրա:

## 6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Սերբիայում տեղի ունեցած «Իրավունք, ներառում, կայունություն և հզորացում» խորագրով միջազգային նախարարական համաժողովին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանի մասնակցության ընթացքում կայացել է աշխատանքային հանդիպում Սերբիայի՝ կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, գենդերային հավասարության, ինչպես նաև կանանց տնտեսական և քաղաքական հզորացման հարցերով պատասխանատու նախարար Տատյանա Մացուրայի հետ, որի շրջանակում ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ խորացնելու երկու երկրների համագործակցությունը կանանց հիմնահարցերի ուղղությամբ:

Որպես այս երկխոսության շարունակություն՝ երեխաների նկատմամբ բռնության դադարեցման վերաբերյալ տարածաշրջանային նախարարական համաժողովի ժամանակ կայացել են մի շարք արդյունավետ հանդիպումներ Սերբիայի գործընկերների հետ: Մասնավորապես, հանդիպել եմ հետևյալ պաշտոնյաների հետ՝

- Լազար Պետրովիչ՝ Ընտանիքի խնամքի և ժողովրդագրության նախարարության պետքարտուղար, պատվիրակության ղեկավար,

- Յասմինա Միտրովիչ՝ Ընտանիքի խնամքի և ժողովրդագրության նախարարության Հանրային կապերի վարչության ղեկավար,
- Միհրետա Ֆեյձուլա՝ Կրթության նախարարության Բռնությունից և խտրականությունից պաշտպանության և կանխարգելիչ աշխատանքի խմբի ղեկավար,
- Օլիվերա Յովովիչ՝ Աշխատանքի, զբաղվածության, վետերանների և սոցիալական քաղաքականության նախարարության պետքարտուղար:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Համաժողովի ընթացքում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հանդիպումների ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ զարգացնելու համագործակցությունը նաև ապաինստիտուցիոնալացման քաղաքականությունների, համայնքային ծառայությունների էկոհամակարգերի, ինչպես նաև այս ոլորտում Սերբիայի փորձի ուսումնասիրման ուղղությամբ: Մասնավորապես, նախատեսվում է Սերբիայի կողմից մշակված մոտեցումների և գործնական փորձի ուսումնասիրություն՝ Հայաստանում երեխայի նոր պաշտպանության համակարգի ներդրման գործընթացում դրանց տեղայնացման հնարավորությունները գնահատելու նպատակով:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը.**

10/17/2025

X

ՏԱԹԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Signed by: STEPANYAN TATEVIK 6205820293